

**Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի  
2015թ. նիստերի արձանագրություններ**

**Արձանագրություն 7**

2015թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 26-ը:

Նախագահ՝ Ռ.Հակոբյան  
Քարտուղար՝ Թ.Ասոյան  
Օրակարգ՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ԲՖ դեկան Թ. Ասոյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվության և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/զեկ՝ ԲՆՖ դեկան Մ.Ավագյան/

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանը: Նա նշեց, որ տարածաշրջանային բուհ լինելը համագործակցությունը այլ բուհերի հետ ԳՊՀ-ին դնում է առանձնահատուկ պայմանների մեջ: Դա նշանակում է նոր կրթական ծրագրերի ներառում ուսումնական գործընթացում, եղածների վերանայում և թարմացում, մանկավարժական նոր տեխնոլոգիաների ներդրում, արդյունավետ աշխատանք ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: ԳՊՀ բանասիրական ֆակուլտետում բոլոր հիմնական ուղղություններով 2014-2015 ուստարում հետևողականորեն իրականացվել են զարգացման հայեցակարգով նախատեսված աշխատանքները: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ ուսանողական համակարգի համալրմանը, առաջադիմությանը, ամփոփիչ ատեստավորման քննություններին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, ուսանողների հետ տարվող

աշխատանքներին վերաբերող հարցերին: Վերլուծվեցին ուսումնական գործընթացում եղած բացթողումները, արվեցին համապատասխան եզրահանգումներ: Թ.Ասոյանը գիտխորհրդին ներկայացրեց նաև ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա հաշվետվությունը և 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը ներկայացրեց ԲնՖ դեկան Մ.Ավագյանը: Նա ասաց, որ հաշվետու ժամանակաշրջանում ուսումնական գործընթացն իրականացվել է նախօրոք հաստատված աշխատանքային պլանով, պարբերաբար հրավիրվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, դեկանատն ու մասնագիտական ամբիոններն աշխատել են համագործակցված՝ հաշվի առնելով ֆակուլտետի առաջնահերթությունները: Այնուհետև զեկուցողը տեղեկություններ տվեց ընդունելության և ուսանողական համակազմի մասին, ներկայացվեցին ուսումնական առաջադիմության և ամփոփիչ ատեստավորման արդյունքները, կրթական ծրագրերի բարեփոխումները և ֆակուլտետում անցկացված միջոցառումները: Հաշվետվությունից հետո Մ.Ավագյանը ներկայացրեց 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

Ներկայացված հաշվետվությունների և հայեցակարգերի շուրջ ծավալվեց քննարկում, ելույթ ունեցան գիտխորհրդի անդամներ:

Հիմք ընդունելով զեկուցումները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հաստատել ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

3.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

4.Հաստատել ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2015-2016 ուստարվա զարգացման հայեցակարգը:

5.Ընդունել «Ուղեցույց ԳՊՀ ուսանողների իրավունքների և պարտականությունների, ուսանողական ինքնակառավարման մարմինների վերաբերյալ» փաստաթուղթը:

Գիտխորհրդի նախագահ՝  
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան  
Թ.Ասոյան